ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոսի 2024թ. N ՄՈ/409-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՎԱՀԱՆ ՌՇՏՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ N 11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի օգոստոսի 21-ի N ԳՍ/20.1/26995-2024 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Մինչև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր դպրոցական շենքի կառուցման աշխատանքների ավարտը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 1-9-րդ դասարանների աշակերտների հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպումն իրականացնել «Վաղարշապատի Ներսիսյան N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացի 101 հասցեում գտնվող դպրոցի շենքում:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը և ֆինանսական վարչությանը (վարչությունների պետեր՝ Ս. Բուդաղյան, վարչության պետի պարտականությունները կատարող՝ Խ.Սարուխանյան և Վ. Մկրտչյան)՝ ապահովել սույն որոշման կատարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը (պետ՝ Ս. Բուդաղյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Վաղարշապատի Ներսիսյան N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Գ.Բիլբուլյանին, «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մ. Սարգսյանին, «Վաղարշապատի Ներսիսյան N 6 հիմնական դպրոց» և «Վաղարշապատի Վ. Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահներին (համաձայնությամբ):
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Արման Խաչատրյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ